

Համարը N 640  
Տիպը Որոշում  
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2001.08.01/24(156)  
Հոդ.567  
Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն  
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ  
Վավերացնող մարմինը ՀՀ Նախագահ  
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 12.07.2001

Տեսակը Մայր  
Կարգավիճակը Գործում է  
Ընդունման վայրը Երևան  
Ընդունման ամսաթիվը 12.07.2001  
Ստորագրման ամսաթիվը 12.07.2001  
Վավերացման ամսաթիվը 12.07.2001  
Ուժը կորցնելու ամսաթիվը

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԱՏՈՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վավերացնում են»  
Հայաստանի Հանրապետության  
Նախագահ Ռ. Քոչարյան  
12 հուլիսի 2001 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 հուլիսի 2001 թվականի N 640  
քաղ. երևան

ԱՏՈՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի, ինչպես նաև ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում անվտանգության բարձրացման գործընթացը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու, ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների և աշխատանքների անկախ գնահատումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

- Հաստատել ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում անվտանգության փորձաքննության կազմակերպման և անցկացման կարգը (կցվում է):
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2001 թվականի հուլիսի 12-ից:

Հայաստանի Հանրապետության  
վարչապետ

Ա. Մարգարյան

Հաստատված է  
ՀՀ կառավարության 2001 թվականի  
հուլիսի 12-ի N 640 որոշմամբ

Կ Ա Ր Գ

ԱՏՈՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում անվտանգության փորձաքննության (այսուհետև՝ փորձաքննություն) իրականացման նպատակն է ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների ու աշխատանքների անվտանգության վերաբերյալ փաստաթղթերի և այլ նյութերի գնահատումը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, միջուկային և ճառագայթային անվտանգության չափանիշներին, նորմերին և կանոններին դրանց համապատասխանությունը պարզելը:

2. Փորձաքննության ենթակա են միջուկային և ճառագայթային վտանգ ներկայացնող օբյեկտների և աշխատանքների անվտանգությունը հիմնավորող փաստաթղթերը, նախագծային փաստաթղթերը և այլ տեղեկություններ:

Պարտադիր փորձաքննության ենթակա անվտանգությունը հիմնավորող փաստաթղթերի ցանկը կցվում է:  
Ցանկում չընդգրկված՝ անվտանգությունը հիմնավորող փաստաթղթերի փորձաքննության անհրաժեշտությունը որոշում է ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի կարգավորող մարմինը (այսուհետև՝ կարգավորող մարմին):

3. Փորձաքննության արդյունքներն օգտագործվում են միջուկային և ճառագայթային անվտանգության նորմերն ու կանոնները սահմանված կարգով գործողության մեջ դնելու, լիցենզիա տալու կամ մերժելու, լիցենզիայի պայմաններում փոփոխություններ կատարելու, անվտանգության մասին որոշումներ ընդունելու համար:

4. Սույն կարգի դրույթները տարածվում են կարգավորող մարմնի և նրանից լիցենզիա (թույլտվություն) ստացած իրավաբանական ու ֆիզիկական անձանց վրա:

5. Փորձաքննությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված և կարգավորող մարմնից լիցենզիա ստացած կազմակերպությունը՝ «Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետև՝ փորձագիտական կազմակերպություն):

Անհրաժեշտության դեպքում փորձաքննության աշխատանքներում կարող են ներգրավվել այլ կազմակերպություններ կամ մասնագետներ:

## II. ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

6. Լիցենզավորված անձը փորձաքննություն անցկացնելու համար կազմում է փորձաքննության տեխնիկական առաջադրանք, որի կազմմանը կարող է մասնակցել փորձագիտական կազմակերպությունը: Փորձաքննության տեխնիկական առաջադրանքում նշվում են փորձաքննության ծավալը և նպատակը:

Փորձաքննության տեխնիկական առաջադրանքը համաձայնեցվում է կարգավորող մարմնի հետ:

Փորձաքննության ենթակա՝ անվտանգությունը հիմնավորող փաստաթղթերի օրինակների թիվը սահմանում է կարգավորող մարմինը:

7. Համաձայնեցված առաջադրանքի հիման վրա լիցենզավորված անձը 10-օրյա ժամկետում փորձագիտական կազմակերպության հետ կնքում է փորձաքննություն անցկացնելու պայմանագիր:

Վճարման կարգն ու ժամանակացույցը սահմանվում են լիցենզավորված անձի և փորձագիտական կազմակերպության միջև կնքված պայմանագրով:

Պետական մարմինների կողմից պատվիրված փորձաքննության ֆինանսավորումը կատարվում է պետական մարմինների պահպանման ծախսերի հաշվին:

8. Լիցենզավորված անձի կողմից ներկայացված անվտանգությունը հիմնավորող փաստաթղթերում թերություններ, անճշտություններ հայտնաբերելու կամ լրացուցիչ փաստաթղթերի անհրաժեշտության դեպքում փորձագիտական կազմակերպությունը լիցենզավորված անձից պահանջում է դրանք վերանայել և լրացումներ կատարել:

9. Փորձագիտական կազմակերպությունն իրականացնում է անվտանգությունը հիմնավորող փաստաթղթերի փորձաքննություն, մշակում է փորձաքննության տեխնիկական առաջադրանքով նախատեսված անվտանգությունը հիմնավորող առանձին փաստաթղթերի վերաբերյալ եզրահանգումներ և ամփոփ հաշվետվություն (եզրակացություն):

10. Փորձաքննությանը չեն կարող մասնակցել անվտանգությունը հիմնավորող փաստաթղթերի հեղինակները և համահեղինակները:

11. Փորձաքննության անվտանգությունը հիմնավորող փաստաթղթերում պետական կամ ծառայողական գաղտնիքի առկայության դեպքում փորձաքննության աշխատանքներին մասնակցում են այդ փաստաթղթերի հետ աշխատելու իրավունք ունեցող անձինք:

12. Փորձագիտական եզրակացությունը մշակելիս գնահատվում են՝

ա) ներկայացված տեղեկատվության ծավալը, անվտանգության չափանիշները,

բ) կիրառված գնահատման մեթոդները,

գ) հաշվարկների և վերլուծությունների արդյունքների համապատասխանությունն անվտանգության նորմերին, կանոններին և չափանիշներին:

13. Փորձագիտական եզրակացության ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները սահմանում է կարգավորող մարմինը:

14. Փորձաքննությունն ավարտելուց հետո փորձագիտական կազմակերպությունը փորձագիտական եզրակացության մեկ օրինակն անվտանգությունը հիմնավորող փաստաթղթերի հետ միասին ներկայացնում է կարգավորող մարմին, իսկ մյուսը՝ լիցենզավորված անձին:

## III. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

15. Լիցենզավորված անձը պատասխանատու է փորձաքննության ֆինանսավորման, ներկայացված փաստաթղթերի հավաստիության և ամբողջական տեղեկատվության համար:

16. Փորձագիտական կազմակերպությունը պատասխանատու է փորձաքննության որակի և եզրակացության համար: